

**ԿՈՆՎԵՆՑԻԱ  
ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՂԱԻՆ**

**Նախաբան**

- Պայմանավորվող կողմերը՝
- i. գիտակցելով միջազգային հասրության համար միջուկային և երգիայի ապահով,
  - լավ կարգավորված եւ եկոլոգիապես անվտանգ օգտագործման կարեւորությունը,
  - ii. վերահաստատելով ողջ աշխարհում միջուկային անվտանգության բարձր մակարդակի ապահովման անհրաժեշտությունը,
  - iii. վերահաստատելով, որ միջուկային անվտանգության ստուգումների համար պատասխանատվությունը դրված է միջուկային օբյեկտի նկատմամբ իրավագորությամբ
  - օժոված Պետության վրա,
  - iv. ցանկանալով նպաստել արդյունավետ միջուկային անվտանգության պրակտիկայի կիրառմանը,
- /5/ գիտակցելով, որ միջուկային օբյեկտներում տեղի ունեցող պատահարները կարող են անդրսահմանային հետեւանքներ ունենալ,
- v. մտապահելով Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին կոնվենցիան /1979/, Միջուկային պատահարների մասին վաղ ազդարարման մասին
  - կոնվենցիան /1986/ եւ Միջուկային պատահարի կամ ռադիոակտիվ վթարի դեպքում
  - աշակեցության ցուցաբերման մասին կոնվենցիան /1986/;
  - vi. հաստատելով գործող երկնողմ եւ բազմակողմ մեխանիզմների միջոցով միջուկային անվտանգության բարելավմանն ու սույն խթանող կոնվենցիայի ստեղծմանն
  - ուղղված միջազգային համագործակցության կարեւորությունը,
  - vii. գիտակցելով, որ սույն կոնվենցիայով սահմանվում է ավելի շուտ միջուկային օբյեկտներում անվտանգության ապահովման արմատական սկզբունքների, քան
  - անվտանգության մանրամասն չափանիշների կիրառման պարտավորություն, եւ որ
  - գոյություն ունի մի շարք պարբերաբար թարմացվող՝ անվտանգությանը վերաբերող հրահանգներ, որոնք պարունակում են ցուցումներ անվտանգության ամենաբարձր
  - մակարդակի ապահովման ուղղված արդիական միջոցների վերաբերյալ,
  - viii. հաստատելով ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին
  - միջազգային կոնվենցիայի մշակման աշխատանքները հնարավորինս շուտ սկսելու
  - կարիքը, քանի դեռ թափոնների կառավարման անվտանգության հիմնադրույթների մշակման
  - շարունակական գործընթացը արդյունք է հանդիսացել միջազգային լայն փոխըմբռնման
  - համար,

ix. ճանաչելով միջուկային վառելիքի ցիկլի այլ մասերի անվտանգության ապահովման հետ կապված հետագա տեխնիկական աշխատանքների անհրաժեշտությունը, եւ  
որ այդպիսի աշխատանքները կարող են ժամանակի ընթացքում նպաստել գործող եւ ապագա  
միջազգային մեխանիզմների զարգացման ու մշակմանը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

### Գլուխ 1 Նպատակներ, սահմանումներ եւ կիրառման ոլորտ

#### ՀՐՈՎԱԾ 1 Նպատակներ

Սույն Կոնվենցիայի նպատակներն են.

i. ազգային մակարդակի վրա ձեռնարկվող միջոցների եւ միջազգային համագործակցության, այդ թվում, համապատասխան դեպքերում, անվտանգության ապահովման ուղղված տեխնիկական համագործակցության միջոցով ձեռք բերել եւ

ապահանել միջուկային անվտանգության բարձր մակարդակ ողջ աշխարհում,  
ii. միջուկային օբյեկտներում ստեղծել եւ կիրառել արդյունավետ պաշտպանիչ միջոցներ՝ այդպիսի օբյեկտների գործունեության արդյունքում առաջացող իոնացնող

ճառագայթման վնասակար ազդեցությունից անձանց, հասարակության եւ շրջակա

միջավայրի պաշտպանության նպատակով,

iii. կանխել ռադիոակտիվ հետեւանքներ ունեցող պատահարները, իսկ հետեւանքների առկայության դեպքում՝ նվազեցնել դրանց ազդեցությունը:

#### ՀՐՈՎԱԾ 2 Սահմանումներ

Սույն Կոնվենցիայի իմաստով.

i. "Միջուկային օբյեկտը" յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար նշանակում է՝ այդ Պետության իրավագորության ներքո գտնվող ցանկացած ցամաքային քաղաքացիական ատոմային էլեկտրակայան՝ ներառյալ նույն տարածքում գտնվող եւ ատոմային էլեկտրակայանի գործունեության հետ անմիջականորեն կապված՝ ռադիոակտիվ

նյութերի պահեստավորման, օգտագործման եւ մշակման համար նախատեսված շինությունները: Այդպիսի էլեկտրակայանը դադարում է միջուկային օբյեկտ հանդիսանալ, եթե ռեակտորի ակտիվ գոտուց մշտապես հեռացվել եւ, սահմանված կարգի

համաձայն, ապահով կերպով պահեստավորվել են միջուկային վառելիքի բոլոր տարրերը,

եւ կարգավորող մարմնի կողմից հաստատվել է շահագործումից հանելու ծրագիրը,

ii. "կարգավորող մարմնը" յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար այն

մարմինն է կամ մարմիններն են, որոնց տվյալ Պայմանավորվող կողմը լիազորում է՝

տրամադրել լիցենզիաներ եւ իրականացնել միջուկային օբյեկտների շինարարության պլանավորման, նախագծման, շինարարության, շահագործման, գործունեության եւ

շահագործումից հանելու գործընթացների կարգավորումը,

iii. "լիցենզիան" կարգավորող մարմնի կողմից հայտատուին տրված ցանկացած թույլտվությունն է, որի համաձայն վերջինս պատասխանատվություն է ստանձնում

միջուկային օբյեկտների շինարարության պլանավորման, նախագծման, շինարարության,

շահագործման, գործունեության եւ շահագործումից հանելու գործընթացների իրականացման համար:

### ՀՐԴՎԱԾ 3 Կիրառման շրջանակը

Սույն Կոնվենցիայով կարգավորվում է միջուկային օբյեկտների անվտանգությունը:

### ԳԼՈՒԽ 2 Պարտավորություններ

ա/ Ըստիանուր դրույթներ

### ՀՐԴՎԱԾ 4 Կոնվենցիայի իրագործման ուղղված միջոցներ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր ազգային օրենսդրության շրջանակներում ձեռնարկում է օրենսդրական, կանոնակարգային, վարչարարական եւ այլ քնույթի միջոցներ՝ սույն Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

### ՀՐԴՎԱԾ 5 Հաշվետվություն

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ 20-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր հանդիպումից առաջ քննարկման համար ներկայացնում է հաշվետվություն՝ սույն Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման ապահովման նպատակով իր կողմից ձեռնարկված միջոցների մասին:

### ՀՐԴՎԱԾ 6 Գործող միջուկային օբյեկտներ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող միջուկային օբյեկտներին ներկայացվող անվտանգության պահանջները

հնարավորինս սեղմ ժամկետներում վերանայվեն: Երբ, սույն Կոնվենցիայի համաձայն,  
այդպիսի անհրաժեշտություն է ծագում, Պայմանավորվող կողմն ապահովում է  
առաջնային կարգով միջուկային օբյեկտի անվտանգության համակարգի  
բարելավման ու  
կատարելագործման ուղղված միջոցների իրականացումը: Եթե այդպիսի  
կատարելագործումն անհնար է, ապա իրագործվում է միջուկային օբյեկտը  
հնարավորինս  
սեղմ ժամանակահատվածում շահագործումից հանելու պլանը: Շահագործումից  
հանելու  
համար անհրաժեշտ ժամկետը որոշելիս կարելի է հաշվի առնել Էներգետիկ  
համատեքստը,  
հնարավոր այլընտրանքները, ինչպես նաև սոցիալական, բնապահպանական եւ  
տնտեսական  
հետեւանքները:

բ/ Օրենսդրություն եւ կանոնակարգում

### ՀՈԴՎԱԾ 7

Օրենսդրական եւ կանոնակարգային համակարգ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մշակում եւ կիրառում է միջուկային  
օբյեկտների անվտանգության ապահովման ուղղված իր սեփական  
օրենսդրական եւ

կանոնակարգային համակարգը:

2. Օրենսդրական եւ կանոնակարգային համակարգը նախատեսում է.

i. անվտանգության ապահովման ազգային կիրառելի պահանջների եւ  
կանոնակարգերի  
մշակում,

ii. միջուկային օբյեկտների հետ կապված գործունեության լիցենզավորման  
համակարգ եւ լիցենզիայի բացակայության դեպքում միջուկային օբյեկտի  
գործունեության արգելում,

iii. միջուկային օբյեկտների նկատմամբ կանոնավոր գննումների եւ  
գնահատումների համակարգի կիրառում, որը կոչված է՝ ապահովելու  
համապատասխանությունը կիրառելի կանոնակարգերի եւ լիցենզիաների  
պայմանների հետ,

iv. հսկողության իրականացում կիրառելի կանոնակարգերի եւ լիցենզիաների  
պայմանների կատարման նկատմամբ, ներառյալ դրանց գործողության  
դադարեցումը,  
պայմաններում փոփոխություններ կատարելը եւ չեղյալ հայտարարելը:

### ՀՈԴՎԱԾ 8

Կարգավորող մարմինը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ստեղծում կամ նշանակում է  
կարգավորող  
մարմին, որին վերապահվում է 7-րդ հոդվածում նշված օրենսդրական եւ  
կանոնակարգային համակարգի կիրառման պարտականությունը, եւ որն օժտված  
է

համապատասխան լիազորություններով ու իրավասություններով եւ ապահովված  
է իրեն

Վերապահված պարտականությունների կատարման համար անհրաժեշտ  
ֆինանսական եւ  
մարդկային ռեսուրսներով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում  
կարգավորող մարմնի եւ միջուկային Ենթագետիկայի օարգացման հարցերով ու  
միջուկային Ենթագիայի օգտագործմամբ զբաղվող որեւէ այլ մարմնի կամ  
կազմակերպության գործառությունների արդյունավետ բաժանում ապահովելու  
համար:

### ՀՈԴՎԱԾ 9

#### Լիցենզիա կրողի պատասխանատվությունը

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ապահովում է, որ միջուկային օբյեկտի  
անվտանգության համար պատասխանատվությունը կրի համապատասխան  
լիցենզիա ստացած  
կազմակերպությունը, եւ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում լիցենզիա ստացած  
տվյալ  
կազմակերպության կողմից սահմանված պահանջների կատարումն ապահովելու  
համար:

գ/ Անվտանգության ապահովման ընդհանուր դրույթներ

### ՀՈԴՎԱԾ 10

#### Անվտանգության ապահովման կարեւորությունը

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում  
ապահովելու համար, որ միջուկային օբյեկտների հետ ուղղակիորեն կապված  
բոլոր  
կազմակերպությունների կողմից իրականացվող քաղաքականության մեջ  
առաջնային տեղ  
գրավի միջուկային անվտանգության ապահովումը:

### ՀՈԴՎԱԾ 11

#### Ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում  
յուրաքանչյուր միջուկային օբյեկտի շահագործման ողջ ժամանակահատվածի  
ընթացքում  
դրա անվտանգության ապահովման համար անհրաժեշտ համապատասխան  
ֆինանսական  
միջոցների առկայությունն ապահովելու համար:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում  
յուրաքանչյուր միջուկային օբյեկտի շահագործման ողջ ժամանակահատվածի  
ընթացքում  
դրա անվտանգության ապահովման ուղղված բոլոր գործողությունների  
կատարման համար  
համապատասխան կրթություն ստացած, պատրաստում կամ վերապատրաստում  
անցած  
մասնագիտացված անձնակազմի առկայությունն ապահովելու համար:

### ՀՈԴՎԱԾ 12

## Մարդկային գործուներ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ մարդկային կարողությունները եւ դրանց սահմանափակումները համապատասխան կերպով հաշվի առնվես միջուկային օբյեկտի շահագործման ողջ ժամանակահատվածի ընթացքում:

### ՀՈԴՎԱԾ 13 Որակի ապահովում

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում միջուկային օբյեկտի շահագործման ողջ ժամանակահատվածի ընթացքում միջուկային անվտանգության ապահովման համար կարեւոր բոլոր գործողություններին վերաբերող հատուկ պահանջների կատարման նկատմամբ վստահության ստեղծմանն ուղղված՝ որակի ապահովման ծրագրերի մշակումն եւ իրականացումն ապահովելու համար:

### ՀՈԴՎԱԾ 14 Վնասանգության գնահատում եւ ստուգում

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ.

i. մինչեւ միջուկային օբյեկտի կառուցումն ու շահագործումը եւ շահագործման ողջ ժամանակահատվածի ընթացքում իրականացվեն համապարփակ եւ համակարգված անվտանգության գնահատումներ: Այդ գնահատումները պետք է արձանագրվեն, պարբերաբար թարմացվեն՝ հաշվի առնելով գործնական փորձը եւ անվտանգության ապահովման վերաբերյալ նորագույն գիտելիքները, եւ վերանայման ենթարկվեն կարգավորող մարմնի լիազորությունների շրջանակներում,

ii. վերլուծությունների, դիտարկումների, տեստերի եւ զննումների միջոցով իրականացվող ստուգումները կոչված են՝ ապահովելու, որ միջուկային օբյեկտի ֆիզիկական վիճակը եւ գործունեությունը շարունակ համապատասխանեն այդ օբյեկտի նախագծին, անվտանգության ապահովման՝ կիրառելի ազգային պահանջներին, արտադրական սահմանափակումների եւ պայմաններին:

### ՀՈԴՎԱԾ 15 Պաշտպանություն ռադիացիայից

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ ցանկացած աշխատանքային ռեժիմի դեպքում աշխատակիցների եւ ընակչության վրա միջուկային օբյեկտի գործունեության արդյունքում արձակվող ռադիացիայի ազդեցությունը կապահանվի գործնականում ինարավոր ամենացածր

մակարդակի վրա, եւ որ ոչ մի անձ չի ենթարկվի ռադիացիայի այնպիսի դոզաների ազդեցության, որոնք գերազանցում են ազգային օրենսդրությամբ սահմանված քանակը:

### ՀՐԴՎԱԾ 16

#### Պատրաստվածություն արտակարգ իրավիճակներում

i. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում օբյեկտի տարածքում եւ տարածքից դուրս ծագող արտակարգ իրավիճակների դեպքում

կիրառվելիք պլանների առկայությունը, միջուկային օբյեկտում դրանց արդյունավետության ստուգումը եւ այդ պլանի մեջ՝ արտակարգ իրավիճակի դեպքում

ձեռնարկվելիք բոլոր միջոցների ընդգրկվածությունն ապահովելու համար:

Ցանկացած միջուկային օբյեկտի համար այդպիսի պլանները մշակվում եւ փորձարկվում են մինչեւ կարգավորող մարմնի կողմից հաստատված ցածր հզորության

մակարդակը գերազանցող հզորությունների անցնելը:

ii. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ քանի դեռ դրա տարածքում կարող է տեղի ունենալ ռադիոակտիվ

պատահար, միջուկային օբյեկտի շրջակայքի բնակչությունը եւ շրջանի իրավասու մարմինները ապահոված լինեն արտակարգ իրավիճակների պլանավորման եւ հաղթահարման

վերաբերյալ համապատասխան տեղեկատվությամբ:

iii. Իրենց տարածքում միջուկային օբյեկտ չունեցող Պայմանավորվող կողմերը, քանի դեռ դրանք կարող են տուժել հարեւանությամբ գտնվող միջուկային օբյեկտում

տեղի ունեցած ռադիոակտիվ պատահարի հետեւանքներից, անհրաժեշտ միջոցներ են

ձեռնարկում իրենց տարածքում արտակարգ իրավիճակների համար պլանների մշակման եւ

փորձարկման համար, որոնցում ներառված կլինիկ բոլոր գործողությունները, որոնք

կարող են իրականացվել այդպիսի արտակարգ իրավիճակի դեպքում:

η/ Օբյեկտների անվտանգությունը

### ՀՐԴՎԱԾ 17

#### Շինարարության համար տեղանքի ընտրություն

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ համապատասխան միջոցառումներ մշակվեն եւ իրականացվեն՝

i. տեղանքին վերաբերող բոլոր այն գործոնների ուսումնասիրման համար, որոնք

կարող են ազդել միջուկային օբյեկտի անվտանգության վրա շահագործման նախատեսվող

ժամանակահատվածի ընթացքում,

ii. անձանց, բնակչության եւ շրջակա միջավայրի վրա նախագծվող միջուկային օբյեկտի հնարավոր բացասական ազդեցությունը գնահատելու համար,

- iii. անհրաժեշտության դեպքում 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված համապատասխան բոլոր գործոնների վերագնահատման համար, որպեսզի ապահովվի  
միջուկային օբյեկտի շարունակական համապատասխանությունը անվտանգության պահանջներին,
- iv. նախագծվող միջուկային օբյեկտին սահմանակից Պայմանավորվող կողմերի հետ խորհրդակցելու համար, քանի դեռ դրանք կարող են ենթարկվել այդ օբյեկտի ազդեցությանը, պահանջի դեպքում այդ Պայմանավորվող կողմերին տրամադրելով տեղեկատվություն, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան կատարել իրենց տարածքի վրա նախագծվող միջուկային օբյեկտի հավանական բացասական ազդեցության սեփական գնահատում:

### ՀՐԴՎԱԾ 18 Նախագծում եւ կառուցում

- Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ
- i. միջուկային օբյեկտի նախագծով եւ շինարարության պլանով նախատեսվի պաշտպանության մի շարք վստահելի միջոցների եւ մեթոդների կիրառում, որոնք ուղղված կլինեն ռադիոակտիվ նյութերի արտանետման դեմ եւ կոչված կլինեն՝ կանխելու վթարները եւ նվազեցնելու ռադիոակտիվ հետեւանքները, եթե այդպիսիք առաջանան,
- ii. միջուկային օբյեկտի նախագծման եւ շինարարության համար օգտագործվող տեխնոլոգիաների վստահելիությունն ապացուցվի փորձով կամ հաստատվի համապատասխան
- տեստերի կամ անալիզների միջոցով,
- iii. միջուկային օբյեկտի նախագիծը կապահովի դրա գործունեության վստահելիությունը, կայուն եւ դյուրին կառավարումը եւ դրանում հատուկ հաշվի կառնվեն մարդկային գործոնները եւ մարդ-մեքենա հարաբերությունները:

### ՀՐԴՎԱԾ 19 Շահագործումը

- Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար, որ.
- i. միջուկային օբյեկտ գործարկելու սկզբնական թույլտվությունը տրամադրվի ապահովության վերլուծության եւ շահագործման համապատասխան ծրագրի հիման վրա,
- ii. սահմանվեն եւ, ըստ անհրաժեշտության, թարմացվեն ապահովության վերլուծության, տեստերի եւ գործնական փորձի վրա հիմնված սահմանափակումներն ու պայմանները՝ շահագործման համար ապահով շրջանակներ հատկանշելու համար,
- iii. միջուկային օբյեկտի շահագործումը, սպասարկումը, գննումը եւ ստուգումն իրականացվեն սահմանված կարգին համապատասխան,

- iv. ընթացակարգեր սահմանվեն շահագործման ընթացքում տեղի ունեցող դեպքերին  
Եւ պատահարներին արձագանքելու համար,
- v. միջուկային օբյեկտի շահագործման ողջ ժամանակահատվածի ընթացքում անվտանգության ապահովման հետ կապված բոլոր ոլորտներում առկա լինի անհրաժեշտ
- ճարտարագիտական եւ տեխնիկական ապահովում,
- vi. անվտանգությանը սպառնացող դեպքերի մասին համապատասխան լիցենզիան կրողը
- ժամանակին տեղեկացնի կարգավորող մարմնին,
- vii. մշակվեն գործնական փորձի կուտակման եւ վերլուծության ծրագրեր, հաշվի առևտության ստացված արդյունքներն ու արված եզրակացությունները եւ կարեւոր փորձը
- միջազգային մարմինների եւ շահագործող այլ կազմակերպությունների եւ կարգավորող մարմինների միջեւ փոխանակելու համար կիրառվեն գործող մեխանիզմները,
- viii. միջուկային օբյեկտի գործունեության արդյունքում ռադիոակտիվ թափունների առաջացումը և վազագույնի հասցված լինի ինչպես գործածության, այնպես
- ել ծավալի առումով, եւ շահագործման հետ ուղղակիորեն կապված ու միջուկային օբյեկտի հետ նույն տարածքում կատարվող՝ օգտագործված վառելիքի եւ թափունների պահեստավորման եւ մշակման համար հաշվի առևտության պայմանների ստեղծման եւ հեռացման անհրաժեշտությունը:

### Գլուխ 3 Պայմանավորվող կողմերի ժողովները

#### ՀՈՂՎԱԾ 20 ԶՆՆԱՐԿՄԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

1. Պայմանավորվող կողմերը սույն Կոնվենցիայի 22-րդ հոդվածով սահմանված կարգով կազմակերպում են ժողովներ /այսուհետ՝ քննարկման ժողովներ/՝ 5-րդ հոդվածին համաձայն ներկայացված հաշվետվությունները քննարկման ենթարկելու նպատակով:
2. Սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ հաշվետվություններում պարունակվող որոշակի առարկաների քննարկման նպատակով կարող են ստեղծվել եւ քննարկման ընթացքում գործել Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչներից կազմված ենթախմբեր:
3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի հնարավորությունը է ընձեռվում մասնակցել այլ Պայմանավորվող կողմերի հաշվետվությունների քննարկումներին եւ պարզաբանումներ ստանալ դրանց վերաբերյալ:

#### ՀՈՂՎԱԾ 21 Ժամանակացույց

- Պայմանավորվող կողմերի նախապատրաստական հանդիպումը տեղի կունենա ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:
- Նախապատրաստական հանդիպման ժամանակ Պայմանավորվող կողմերը որոշում են ընսարկման առաջին ժողովի օրը: Զննարկման առաջին ժողովը պետք է տեղի ունենա ինարավորինս շուտ, սակայն ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից երեսուն ամիս հետո:
- Յուրաքանչյուր ժողովի ընթացքում Պայմանավորվող կողմերը որոշում են հաջորդ ժողովի օրը: Ժողովների միջեւ դադարը չպետք է գերազանցի երեք տարին:

### ՀՈԴՎԱԾ 22 Ընթացակարգի կանոններ

1. 21-րդ հոդվածի համաձայն անցկացվող նախապատրաստական հանդիպման ընթացքում

Պայմանավորվող կողմերը մշակում եւ փոխհամաձայնությամբ ընդունում են ընթացակարգի կանոնները եւ ֆինանսական կանոնները: Պայմանավորվող կողմերը,

ընթացակարգի կանոններին համապատասխան, սահմանում են, մասնավորապես.

- 5-րդ հոդվածի համաձայն ներկայացվող հաշվետվությունների ձեւաչափի եւ կառուցվածքի վերաբերյալ դեկավար ցուցումները,
- այդ հաշվետվությունների ներկայացման ժամկետները,
- այդ հաշվետվությունների ընսարկման կարգը:

2. Զննարկման ժողովներին Պայմանավորվող կողմերն անհրաժեշտության դեպքում

կարող են վերանայել վերը նշված 1-3-րդ ենթակետերի դրույթները եւ փոխհամաձայնության միջոցով ընդունել այդ փոփոխությունները, եթե ընթացակարգի

կանոններով այլ կերպ նախատեսված չէ: Պայմանավորվող կողմերը կարող են նաև

փոփոխություններ կատարել ֆինանսական կանոնների մեջ՝ նույնապես փոխհամաձայնության միջոցով:

### ՀՈԴՎԱԾ 23 Արտահերթ ժողովներ

Պայմանավորվող կողմերի արտահերթ ժողովներ են անցկացվում.

i. Եթե այդպիսի որոշում է կայացվում ժողովին ներկա գտնվող եւ քվեարկած Պայմանավորվող կողմերի մեծամասնության կողմից՝ ներառյալ ձեռնպահ քվեարկածները,

կամ

ii. Պայմանավորվող կողմի դիմումի համաձայն՝ այլ Պայմանավորվող կողմերին դիմումն ուղղելու եւ 28-րդ հոդվածում նշված քարտուղարության կողմից դիմումը Պայմանավորվող կողմերի մեծամասնության հավանությանն արժանանալու մասին

ծանուցումն ստանալու պահից վեց ամսվա ընթացքում:

## ՀՐԴՎԱԾ 24

### Մասնակցություն

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մասնակցում է Պայմանավորվող կողմերի ժողովներին եւ դրանց ներկայացված է լինում մեկ պատգամավորով եւ այնպիսի փոխարինող անձանցով, փորձագետներով կամ խորհրդատուներով, որոնց ներկայությունը

կարող է անհրաժեշտ համարվել:

2. Պայմանավորվող կողմերը փոխհամաձայնության միջոցով կարող են դիտորդի կարգավիճակով հրավիրել սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերում իրավասու որեւէ միջկառավարական կազմակերպության՝ մասնակցելու դրանց ցանկացած ժողովին կամ ժողովի առանձին նիստերին: Դիտորդներից նախօրոք պահանջվում է գրավոր տեսքով ընդունել 27-րդ հոդվածի պահանջները:

## ՀՐԴՎԱԾ 25

### Ամփոփիչ հաշվետվություններ

Պայմանավորվող կողմերը փոխհամաձայնության միջոցով ընդունում եւ հրապարակում են ժողովի ընթացքում քննարկված հարցերին եւ արված եզրակացություններին նվիրված փաստաթուղթը:

## ՀՐԴՎԱԾ 26

### Լեզուներ

1. Պայմանավորվող կողմերի ժողովների լեզուներ են սահմանվում արաբերենը, չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը եւ իսպաներենը, եթե ընթացակարգի

կանոններով այլ կերպ նախատեսված չէ:

2. 5-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաշվետվությունները կազմվում են այս

լեզրայացրած Պայմանավորվող կողմի պետական լեզվով կամ միասնական այն լեզվով,

որը կահմանվի ընթացակարգի կանոններով: Եթե հաշվետվությունը ներկայացվում է

որեւէ այլ պետական լեզվով, որը նույնը չէ, ինչ սահմանված միասնական լեզուն, ապա Պայմանավորվող կողմը պարտավոր է ապահովել նաեւ դրա թարգմանությունը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ փոխհատուցում ստանալու դեպքում քարտուղարությունը կկատարի ժողովի որեւէ այլ լեզվով ներկայացված հաշվետվության թարգմանությունը սահմանված լեզվի:

## ՀՐԴՎԱԾ 27

### Գաղտնիություն

1. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում տեղեկատվության

գաղտնիության պահպանման հետ կապված՝ Պայմանավորվող կողմերի օրենքներով  
նախատեսված իրենց իրավունքներն ու պարտականությունները: Սույն հոդվածի  
իմաստով  
"տեղեկատվություն" հասկացությունը մասնավորապես ընդգրկում է. 1/  
անձնական  
տվյալները, 2/ մտավոր սեփականության իրավունքներով պաշտպանված կամ  
արդյունաբերական կամ տնտեսական գաղտնիք պարունակող  
տեղեկատվությունը եւ 3/  
ազգային անվտանգությանը կամ միջուկային նյութերի կամ օբյեկտների  
ֆիզիկական  
պաշտպանության առնչվող տեղեկությունները:

2. Այն դեպքերում, երբ, սույն Կոնվենցիայի համաձայն, Պայմանավորվող կողմը  
տրամադրում է տեղեկատվություն, որն ինքը համարում է 1-ին կետի դրույթներին  
համապատասխանող եւ պաշտպանության ենթակա, ապա այդ  
տեղեկատվությունը կարող է  
օգտագործվել միայն այն նպատակներով, որոնց համար տրամադրվել է, եւ դրա  
գաղտնիությունը պետք է ապահովվի:

3. Ժողովների ընթացքում Պայմանավորվող կողմերի հաշվետվությունների  
ընսարկումների բովանդակությունը նույնպես գաղտնի է համարվում:

### ՀՈԴՎԱԾ 28 Քարտուղարություն

- Պայմանավորվող կողմերի ժողովների քարտուղարությունն ապահովում է  
Առոմային ենթագիայի միջազգային գործակալության /այսուհետ՝  
Գործակալություն/  
կողմից:
  - Զարտուղարությունը.
    - գումարում, նախապատրաստում եւ սպասարկում է Պայմանավորվող  
կողմերի  
ժողովները,    - Պայմանավորվող կողմերին է փոխանցում սույն Կոնվենցիայի դրույթների  
համաձայն ստացված կամ պատրաստված տեղեկատվական նյութերը:
- 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված գործառույթների կատարումից բխող  
ծախսերը  
հոգում է Գործակալությունը՝ իր կանոնավոր բյուջեի շրջանակներում:
- Պայմանավորվող կողմերը կարող են փոխհամաձայնության միջոցով դիմել  
Գործակալությանը՝ ժողովների անցկացման օժանդակող այլ ծառայություններ  
մատուցելու իննդրանքով: Գործակալությունը մատուցում է այդ ծառայությունները,  
եթե դրանք ընդգրկված են դրա ծրագրային շրջանակներում եւ նախատեսված են  
կանոնավոր բյուջեով: Դրա անհնարինության դեպքում Գործակալությունը կարող  
է այդ  
ծառայությունները մատուցել որեւէ այլ աղբյուրից կամավոր կերպով  
ֆինանսավորվելու դեպքում:

### Գլուխ 4 Եզրափակիչ եւ այլ դրույթներ

### ՀՈԴՎԱԾ 29 Վեճերի կարգավորում

Սույն Կոնվենցիայի դրույթների մեջնաբանման կամ կիրառման վերաբերյալ  
երկու

կամ ավելի Պայմանավորվող կողմերի միջեւ վեճ ծագելու դեպքում Կողմերը  
ծագած

Վեճը կարգավորելու նպատակով խորհրդակցություններ են կազմակերպում  
իրենց

ժողովների շրջանակներում:

### ՀՈՂՎԱԾ 30

Ստորագրում, վավերացում, ընդունում, հաստատում, միացում

1. Սույն Կոնվենցիան բաց է բոլոր Պետությունների ստորագրման համար  
Գործակալության կենտրոնակայանում՝ Վիեննայում, 1994 թ. սեպտեմբերի 20-ից  
մինչեւ ուժի մեջ մտնելու պահը:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ միացման բոլոր  
Պետությունների կողմից:

3. Ուժի մեջ մտնելուց հետո Կոնվենցիային միանալը բաց կլինի բոլոր  
Պետությունների համար:

4.i. Սույն Կոնվենցիան բաց կլինի ստորագրման կամ միանալու համար  
ինտեգրման կամ այլ ընույթ կրող տարածաշրջանային կազմակերպությունների  
կողմից՝

պայմանով, որ ցանկացած այդպիսի կազմակերպության անդամակցությունը  
կազմված

լինի ինքնիշխան Պետություններից եւ օծուված լինի սույն Կոնվենցիայով  
կարգավորվող հարցերին առնչվող միջազգային համաձայնագրերի շուրջ  
բանակցություններ վարելու, այդպիսի համաձայնագրեր կնքելու եւ կիրառելու  
իրավասություններով:

ii. Իրենց իրավասությունների շրջանակներում ընդգրկված հարցերում այդպիսի  
կազմակերպությունները սեփական անունից օգտվում են այն իրավունքներից եւ  
կատարում այն պարտականությունները, որոնք սույն Կոնվենցիայով սահմանված  
են

Պայմանավորվող կողմերի համար:

iii. Սույն Կոնվենցիայի Կողմ դառնալու դեպքում այդպիսի կազմակերպությունը  
34-րդ հոդվածում նշված ավանդապահին է ուղարկում հայտարարություն, որտեղ  
նշվում

Են այդ կազմակերպության անդամ պետությունները, դրա նկատմամբ կիրառելի՝  
սույն

Կոնվենցիայի հոդվածները եւ այդ հոդվածներով կարգավորվող ոլորտներում դրա  
իրավասության շրջանակները:

iv. Այդպիսի կազմակերպությունը, բացի իր անդամ պետությունների ծայներից,  
որեւէ լրացուցիչ ծայն չունի:

5. Վավերագրերը, ընդունման, հաստատման կամ միանալու վերաբերյալ  
փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին:

### ՀՈՂՎԱԾ 31

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման,  
հաստատման

կամ միանալու մասին քաներկուերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու պահից

ինսուլերորդ օրը՝ ներառյալ այն տասնյոթ Պետությունների փաստաթղթերը, որոնցից  
յուրաքանչյուրն ունի առնվազն մեկ միջուկային օբյեկտ, որի ռեակտորի ակտիվ  
գոտին  
աշխատում է կրիտիկական ռեժիմով:

2. Յուրաքանչյուր այն Պետության կամ ինտեգրման եւ որեւէ այլ քնույթ կրող կազմակերպության համար, որը սույն Կոնվենցիան վավերացնում, ընդունում,  
հաստատում կամ դրան միանում է 1-ին կետով սահմանված պահանջները  
բավարարելու  
համար անհրաժեշտ վերջին փաստաթուղթն ի պահ հանձնելու պահից հետո,  
սույն  
Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի Պետության կամ կազմակերպության  
կողմից  
համապատասխան փաստաթուղթն ավանդապահին ի պահ հանձնվելուց հետո՝  
ինսուլերորդ  
օրը:

### ՀՐԴՎԱԾ 32 Կոնվենցիայում փոփոխություններ կատարելը

1. Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է առաջարկել փոփոխություններ կատարել սույն Կոնվենցիայում: Առաջարկվող փոփոխությունները քննարկվում են հերթական կամ արտահերթ ժողովներին:

2. Առաջարկվող փոփոխությունների տեքստը հիմքերի հետ միասին ներկայացվում է ավանդապահին, որը դրանք սեղմ ժամկետներում՝ դրա քննարկման համար նախատեսված ժողովից առնվազն ինսուլ օր առաջ, ուղարկում է բոլոր Պայմանավորվող կողմերին:  
Առաջարկության վերաբերյալ ստացված բոլոր դիտողություններն ավանդապահի կողմից

ներկայացվում են Պայմանավորվող կողմերին:

3. Առաջարկվող փոփոխությունը քննարկման ենթարկելուց հետո  
Պայմանավորվող

կողմերը որոշում են կայացնում այն փոխհամաձայնության միջոցով ընդունելու կամ,

փոխհամաձայնության բացակայության դեպքում, Դիվանագիտական խորհրդաժողով

գումարելու մասին: Առաջարկվող փոփոխությունը Դիվանագիտական խորհրդաժողովին

ներկայացնելու մասին որոշումն ընդունվում է ժողովին ներկա գտնվող եւ քվեարկած

Պայմանավորվող կողմերի ձայների երկու երրորդ մեծամասնությամբ՝ պայմանով, որ

քվեարկությանը ներկա լինեն Պայմանավորվող կողմերի առնվազն կեսը:  
Ձեռնպահ

քվեարկածները նույնպես քվեարկած են համարվում:

4. Սույն Կոնվենցիայում առաջարկվող փոփոխությունները քննարկելու եւ ընդունելու համար նախատեսված Դիվանագիտական խորհրդաժողովը  
գումարվում է

ավանդապահի կողմից եւ անցկացվում է սույն հոդվածի 3-րդ կետով  
նախատեսված  
համապատասխան որոշումն ընդունելու պահից ամենաուշը մեկ տարի հետո:  
Դիվանագիտական խորհրդաժողովը ձեռնարկում է բոլոր հնարավոր ջանքերը,  
որպեսզի  
առաջարկվող փոփոխություններն ընդունվեն փոխհամաձայնությամբ: Եթե  
այդպես չի  
հաջողվում, ապա փոփոխություններն ընդունվում են Պայմանավորվող կողմերի  
ձայների  
երկու երրորդ մեծամասնությամբ:

5. 3-րդ եւ 4-րդ կետերով սահմանված կարգով ընդունված փոփոխությունները  
ենթակա են Պայմանավորվող կողմերի վավերացմանը, ընդունմանը եւ  
հաստատմանը եւ  
ուժի մեջ են մտնում այն Պայմանավորվող կողմերի համար, որոնք դրանք  
վավերացրել,  
ընդունել կամ հաստատել են Կոնվենցիայի Կողմերի առնվազն երեք քառորդի  
համապատասխան փաստաթղթերը ավանդապահի ստանալու օրվանից  
ինևսուներորդ օրը:

Յանկացած այլ Պայմանավորվող կողմի համար, որը նշված փոփոխությունները  
վավերացնում, ընդունում կամ հաստատում է հետագայում, դրանք ուժի մեջ են  
մտնում

դրա համապատասխան փաստաթղթերն ավանդապահին ի պահ հանձնելու  
պահից ինևսուներորդ  
օրը:

### ՀՐԴՎԱԾ 33 ՉԵՆՅԱԼ ԻԱՅՏԱՐԱՐՈՒՄ

1. Յանկացած Պայմանավորվող կողմ կարող է չենյալ իայտարարել սույն  
Կոնվենցիան ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:
2. Չենյալ իայտարարումն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից այդ մասին  
ծանուցագիրն ստանալու պահից մեկ տարի հետո կամ ավելի ուշ, ինչպես կարող է  
նշված լինել ծանուցագրի մեջ:

### ՀՐԴՎԱԾ 34 ԱՎԱՆԴԱՊԱՀ

1. Սույն Կոնվենցիայի ավանդապահ է նշանակվում Գործակալության Գլխավոր  
տնօրենը:
2. Ավանդապահը Պայմանավորվող կողմերին տեղեկացնում է.
  - i. սույն Կոնվենցիայի ստորագրման եւ, 30-րդ հոդվածին համապատասխան,  
վավերագրերը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթերն  
ի պահ  
հանձնելու մասին,
  - ii. 31-րդ հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա  
մասին,
  - iii. 33-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայի չենյալ իայտարարման վերաբերյալ  
ծանուցագրերի եւ դրանց ուղարկման օրերի մասին,
  - iv. սույն Կոնվենցիայում փոփոխություններ կատարելու՝ Պայմանավորվող  
կողմերի առաջարկությունների, համապատասխան Դիվանագիտական  
խորհրդաժողովի կամ

Պայմանավորվող կողմերի ժողովի կողմից ընդունված փոփոխությունների Եւ, 31-րդ հոդվածի համաձայն, դրանց ուժի մեջ մտնելու օրվա մասին:

**ՀՐՈՎԱԾ 35**  
**Հավասարազոր տեքստեր**

Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում ավանդապահին, որը դրա հաստատված պատճեններն ուղարկում է Պայմանավորվող կողմերին:

\* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998 թվականի դեկտեմբերի 20-ից: